ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. ապրիլի 14-ին, N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-26-րդ կետերով և հաշվի առնելով «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2025 թվականի ապրիլի 8-ի գրությունը, որոշում եմ.

1. Հաստատել՝

«Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի՝

1.1. եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի,

1.2. հաստիքացուցակը՝ համաձայն N2 հավելվածի,

1.3. վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների, հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակների ու սակագների ցուցակը համաձայն N3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 4/14/2025 14:37:50 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.Մովսիսյան